ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

21 հուլիսի 2025թ. ժամը 11:00

գ. Աշոցք

Մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արման Նալբանդյան
գնահատող հանձնաժողովի անդամ՝ Իգիթ Առաքելյան
Թադևոս Պողոսյան
գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Էմմա Ղազարյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/50 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/50 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ գնման գներն ըստ չափաբաժինների.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման գինը
1	ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ	75 616 370

Հանձնաժողովն արձանագրեց, որ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Հասցե	Հեռախոս
«ՇԱՀԱՐՏ » ՍՊԸ	ՀՀ, ք. Արտաշատ, Երևան-Երասխ մայրուղի 40	094-52-03-04
«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ գ. Շահումյան, Պ 7	098-00-02-04

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտերը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն էին.

ՀՀ դրամ

Մասնակից	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրի ոռոգման			

համակարգի կառուցման աշխատանքներ			
«ՇԱՀԱՐՏ » ՍՊԸ	62 250 000	12 450 000	74 700 000
«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ	41 580 000	8 316 000	49 896 000

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարներում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին	Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին
«ՇԱՀԱՐՏ » ՍՊԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է
«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ որոշել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/50 ծածկագրով գնման ընթացակարգի՝ ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ին, որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցն է «ՇԱՀԱՐՏ » ՍՊԸ-ն:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 2

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/50 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների կատարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/50 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հանձնարարեց քարտուղարին հրավերով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող 4-րդ աշխատանքային օրը ընտրված մասնակիցներին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկները և պայմանագրի նախագծերը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Արման Նալբանդյան

Հանձնաժողովի անդամներ _____ Իգիթ Առաքելյան

_____ Թադևոս Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Էմմա Ղազարյան